Բաց կառավարման գործընկերության 2016-2018թթ. հանձնառությունների շրջանակներում 5-րդ հանձնառության և տեղեկատվության ազատության ու հրապարակայնության ապահովման պահանջների մոնիտորինգի

ԶԵԿՈՒՅՑ

Սույն հետազոտությունն իրականացրել է Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը՝ Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (ԹԻՀԿ) կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում:

Նյութի բովանդակության պատասխանատուն Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպությունն է, և պարտադիր չէ, որ այն արտացոլի ԱՄՆ ՄԶԳ-ի կամ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:

Բաց կառավարման գործընկերության 2016-2018թթ. հանձնառությունների շրջանակներում 5-րդ հանձնառության և տեղեկատվության ազատության ու հրապարակայնության ապահովման պահանջների մոնիտորինգի

ԶԵԿՈՒՅՑ

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՀԿ
Գյումրի 3102, Պուշկինի 96
Հեռ.՝ +374 312 50622
Էլ. հասցե՝ admin@asparez.am
Կայքէջ՝ www.asparez.am

ԵՐԵՎԱՆ 2021

Բովանդակություն

Ներածություն 6
Մոնիտորինգի մեթոդաբանություն 8
1.1 Պաշտոնական կայքերին ներկայացվող պահանջներ 10
1.2 Տեղեկատվության հասանելիություն 11
1. 3 Համայնքի բնակիչների իրազեկումը և մասնակցությունը որոշումների կայացմանը 13
1.4 Ավագանու նիստեր 15
1.5 Ճաիերի բախում 16
1.6 Աճուրդների կազմակերպում 17
2. Համայնքի ղեկավարի և ավագանու հետ հետադարձ կապ 18
2.1 Համայնքի ղեկավարի և ավագանու վերաբերյալ հասանելի տեղեկատվություն 18
2.2 Առցանց դիմում, բողոք, հարցում ներկայացնելու հնարավորություն 20
2.3. Հանրային լսումներ և քննարկումներ 21
2.4. Ավագանու նիստեր 22
2.5. Ճաիերի բախում 29
2.6. Աճուրդների կազմակերպում 30
Եզրակացություններ և առաջարկներ 31
1. Համայնքապետարանի, համայնքի ղեկավարի և ավագանու հասանելիության մասին 31
2. Առցանց դիմում, բողոք, հարցում ներկայացնելու հնարավորության մասին 31
3. Հանրային լսումների և քննարկումների արդյունավետության բարձրացման մասին 32
4. Ավագանու նիստերի, ավագանու որոշումների և համայնքապետերի ընդունած իրավական ակտերի մասին 32
5. Ճաիերի բախումների կարգավորման մասին 33
6. Աճուրդների կազմակերպման հրապարակայնության մասին 33
Հավելված 1. Իրավական ակտեր 34
Հավելված 2. Համայնքային կայքերի դիտարկման քարտ 35

Հապավումներ

ԲԿԳ	Բաց կառավարման գործընկերություն
ԳԾ	Գործողությունների ծրագիր
ՀԿՏՀ	Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՈԱԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ՏԿԶՆ	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ

Ամփոփագիր

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի հետ ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային աջակցությամբ իրականացրել է այս մոնիտորինգային աշխատանքը, որի նպատակն է եղել պարզել ՀՀ Բաց կառավարման գործընկերության գործողությունների 2016-2018 թթ. ծրագրով նախատեսված հանձնառություններից մեկի կատարման որակը: Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) ՀՀ 2016-2018թթ. հանձնառությունների շրջանակներում թվով 8 հանձնառություններից 5-րդը վերաբերում է համայնքային որոշումների համացանցային պորտալի ստեղծմանը, այն է. «Բաց տվյալների» սկզբունքի հիման վրա համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների հրապարակման միասնական իրավական տեղեկատվական համակարգի ստեղծում, ինչպես նաև Ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների հասանելիության ապահովում, փնտրելու հնարավորության ստեղծում (պարզ և ընդլայնված որոնում), օգտագործման մատչելիության ապահովում, համայնքների գործունեության թափանցիկության բարելավում:

Հանձնառության բաղադրիչներն էին համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների հրապարակման մեկ միասնական էլեկտրոնային հարթակի ստեղծում՝ որոնման հնարավորությամբ, համայնքային ծառայողների ուսուցման կազմակերպում և անցկացում, նախկինում ընդունված համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների արխիվային բազայի ստեղծում (սկսած 2018թ. հունվարից):

Մոնիտորինգի շրջանակներում ուսումնասիրվել են համայնքային համացանցային հրապարակումները, բացահայտել հանձնառության կատարման որակը, թերությունները և, ըստ այդմ, կազմվել է իրադրության շտկման առաջարկությունների փաթեթ:

Ներկայացված առաջարկները ներառում են հետևյալը՝

- վերակառուցել և լրացնել համայնքների պաշտոնական համացանցային կայքերը՝ դրանցում ներկայացնելով համայնքի ավագանու, խմբակցությունների և համայնքապետերի վերաբերյալ մանրամասն տվյալներ, ինչպես նաև՝ համայնքապետարան դիմելու մեխանիզմները
- հանրային իրազեկման արշավի միջոցով հանրամատչելի կերպով ներկայացնել քաղաքացիներին առցանց դիմում, բողոք, հարցում ներկայացնելու հնարավորության մասին.
- կարգավորել համայնքապետարանի կողմից հանրությանը պատշաճ իրազեկման մեխանիզմները՝ ապահովելով, որ կայանալիք հանրային լսումների կամ քննարկումների մասին իրազեկումը կատարվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի պահպանմամբ.
- հանրային լսումներին պատշաճ մասնակցություն ապահովելու և ավելի որակյալ արդյունքների հասնելու համար օգտագործել վիրտուալ սոցիալական ցանցերի հնարավորությունները, ապահովել հանրային լսումների ուղիղ հեռարձակում, պահպանել տեսագրությունները, հրապարակել ելույթների գրավոր տեքստերը, գրավոր առաջարկությունները, մասնակիցների ցուցակը և այլն.
- համայնքային կայքերում ավագանու նիստերի իրազեկման օրվա, ժամի և վայրի մասին հայտարարության հետ հրապարակել նաև որոշումների բոլոր նախագծերը, դրանց

հիմնավորումները և բոլոր հավելվածները, իսկ նիստից հետո հրապարակել արդեն ընդունված որոշումները և հարակից բոլոր փաստաթղթերը.

- համայնքների կայքերում ներկայացնել ավազանիների կանոնակարգը՝ դրանցում նախատեսելով ավազանու անդամների շահերի բախման ռիսկերի նվազեցումը սահմանող դրույթներ.
- համայնքային կայքերում ստեղծել աճուրդներին վերաբերող տեղեկատվության բաժին, որտեղ զետեղվեն դրանց առնչվող փաստաթղթերը՝ հայտարարությունները, հայտատուների ցուցակները, աճուրդին դրվող գույքը, աճուրդային հանձնաժողովի որոշումը, ինչպես նաև բոլոր աճուրդների համար ապահովել ուղիղ հեռարձակում՝ պահպանելով հեռարձակման տեսագրությունը և հղումները:

Ներածություն

Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) գլոբալ նախաձեռնությունը հիմնադրվել է 2011թ. սեպտեմբերի 8-ին, 8 երկրների (Բրազիլիա, Ինդոնեզիա, Մեքսիկա, Նորվեգիա, Ֆիլիպիններ, Հարավաֆրիկյան հանրապետություն, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ) նախաձեռնությամբ: Այսօրվա դրությամբ 78 երկրներ միացել են այս նախաձեռնությունը:

ԲԿԳ-ը կամավոր միջազգային նախաձեռնություն է, որի նպատակն է նպաստել պետական կառավարման համակարգի բարելավմանը քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավմամբ, խթանելով դրա արդյունավետությունը՝ բարձրացնելով պետություն-քաղաքացի հարաբերությունների թափանցիկության, վստահելիության և հաշվետվողականության մակարդակը:

Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) ԲԿԳ համաշխարհային նախաձեռնությանը միացել է 2011թ. նոյեմբերին: Նախաձեռնության շրջանակներում ԲԿԳ-ի անդամ պետությունների կառավարությունը պարտավորվում է միջգերատեսչական խորհրդատվությունների և հանրային քննարկումների արդյունքում մշակել հանրային կառավարման համակարգի բարեփոխմանն ուղղված երկամյա գործողությունների ծրագիր:

Գլոբալ նախաձեռնությանը միանալուց ի վեր ՀՀ-ը մշակել և իրականացրել է գործողությունների չորս ծրագիր. առաջինը՝ 2012-2014թթ., երկրորդը՝ 2014-2016թթ., երրորդը՝ 2016-2018թթ. և չորրորդը՝ 2018-2020թթ. համար:

ԲԿԳ-ի իրականացման ազգային գործընթացները գնահատելու համար ԲԿԳ կենտրոնական գրասենյակը կիրառում է Անկախ հետազոտական մեխանիզմ, որի հիման վրա յուրաքանչյուր երկրի անկախ փորձագետ պատրաստում է Գործողությունների ծրագրերի իրականացման միջանկյալ և վերջնական զեկույց: Դրանից զատ ՀՀ կառավարությունն իր հերթին հրապարակում է ԲԿԳ շրջանակներում Գործողությունների ծրագրի Ինքնագնահատման միջանկյալ և վերջնական զեկույցները: Ի թիվս այդ մեխանիզմների ԲԿԳ գործողությունների ծրագրի կատարումը հաճախ միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների դիտարկման առարկա է դառնում: Այդպիսի մի նախաձեռնություն է սույն զեկույցը, որում փորձ է արվում գնահատել ԲԿԳ գործողությունների երրորդ ծրագրով նախատեսած 5-րդ հանձնառությունը և տեղեկատվության ազատության և հրապարակայնության ապահովմանն առնչվող իրավական կարգավորումների ավելի լայն շրջանակ: Մասնավորապես, ուսումնասիրվել են ԲԿԳ նախորդ Գործողությունների ծրագրով ՏԻՄ-ին առնչվող հանձնառությունների կատարումը, ինչպես նաև՝ «Տեղական ինքնակառավարման մասին» և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներով սահմանված տեղեկատվության հրապարակման պարտավորության կատարումը:

Հանձնառության մասին

Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) 2016-2018թթ. հանձնառությունների շրջանակներում թվով 8 հանձնառություններից 5-րդը վերաբերում էր Համայնքային որոշումների պորտալի ստեղծմանը:

Հանձնառության ձևակերպումը. Համայնքային որոշումների պորտալ. «Բաց տվյալների» սկզբունքի հիման վրա համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների հրապարակման միասնական իրավական տեղեկատվական համակարգի ստեղծում: Ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների հասանելիության ապահովում, փնտրելու հնարավորության ստեղծում (պարզ և ընդլայնված որոնում), օգտագործման մատչելիության ապահովում, համայնքների գործունեության թափանցիկության բարելավում:

Հանձնառության բաղադրիչներն են՝

1. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների հրապարակման մեկ միասնական էլեկտրոնային հարթակի ստեղծման վերաբերյալ հնարավոր տեխնիկական լուծումների քննարկում քաղաքացիական հասարակության և մասնավոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ (2016թ. սեպտեմբեր – 2016թ. նոյեմբեր):

2. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների հրապարակման մեկ միասնական էլեկտրոնային հարթակի ստեղծում՝ որոնման հնարավորությամբ (2016թ. դեկտեմբեր – 2018թ. հունիս):

3. Համայնքային ծառայողների ուսուցման կազմակերպում և անցկացում (2017թ. հուլիս – 2017թ. դեկտեմբեր):

4. Նախկինում ընդունված համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների արխիվային բազայի ստեղծում (սկսած 2018թ. հունվարից):

Պատասխանատու կառույց՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Աջակցող գերատեսչություններ՝ ՀՀ մարզպետարաններ

Սկիզբը՝ 2016 թ. սեպտեմբեր Ավարտը՝ 2018 թ. հունիս

ԲԿԳ գրեթե բոլոր հանձնառությունների շրջանակներում առկա են ՏԻՄ գործունեությանը և, մասնավորապես, ՏԻՄ պաշտոնական կայքերին առաջադրվող պահանջներին առնչվող հանձնառություններ: Մասնավորապես, 2018-2020թթ. հանձնառությունների շրջանակներում ևս համայնքային կայքերին առնչվող հանձնառություն կա. 4. Համայնքային կայքերի արդիականացում. տեղական մակարդակում հրապարակայնության, թափանցիկության և մասնակցայնության ամրապնդում: Պարտավորության նպատակը՝ ընդլայնել 3000 կամ ավելի բնակիչ ունեցող համայնքների ՏԻՄ-երի կողմից հրապարակվող տեղեկատվության ցանկը, ինչպես նաև 20000 կամ ավելի բնակիչ ունեցող համայնքների ՏԻՄ-երի նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քննարկման ապահովում Իրավական ակտերի նախագծերի e-draft.am միասնական կայքում:

ԲԿԳ 2014-2016թթ. երկրորդ գործողությունների ծրագրի հանձնառությունների շրջանակներում[1] 11-րդ հանձնառությունը առնչվում էր 20,000 և ավելի բնակչություն ունեցող

[1] 2014թ. հուլիսի 31-ի ՀՀ կառավարության նիստի թիվ 32-1 արձանագրային որոշում

համայնքների համացանցային տեղեկատվական կայքերի ստեղծում՝ հանրային մեկնաբանությունների հնարավորությամբ, համայնքային իշխանության կողմից ընդունված բոլոր իրավական ակտերի հրապարակում, ավագանու նիստերի, հանրային քննարկումների հեռարձակում:

Մոնիտորինգի մեթոդաբանություն

Նպատակը

Գնահատել 3000 և ավելի բնակչություն ունեցող համայնքապետարանների կողմից ինչպես ԲԿԳ 2016-2018թթ. հանձնառությունների, այնպես էլ «Տեղական ինքնակառավարման մասին» և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներով սահմանված տեղեկատվության հրապարակման պարտավորության կատարումը:

Համայնքների ընտրանքը

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության (ՏԿԶՆ) կողմից տրամադրվել է բոլոր 502 համայնքների բնակչության թիվը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ, ինչպես նաև 3000-ից ավել բնակչություն ունեցող համայնքների ցանկը, որոնք թվով 153 են, ինչը կազմում է համայնքների ընդհանուր թվի 30%-ը:

Հաշվի առնելով, որ նշված թվից 5% սահմանային սխալով և 95% հուսալիության աստիճանով պատահական ընտրանք կատարելու դեպքում թիվը էականորեն մեծ չէր գլխավոր համախմբության թվից, որոշվեց իրականացնել համատարած ուսումնասիրություն՝ ներառելով 3000-ից ավել բնակչություն ունեցող բոլոր 153 համայնքները (*տես աղյուսակ 1-ը*):

Աղյուսակ 1. Ընտրանքային ցուցանիշներ

	Գլխավոր համախմբություն	5% սահմանային սխալ, 95% հուսալիության աստիճան	5% սահմանային սխալ, 90% հուսալիության աստիճան
3000-ից ավել բնակչություն ունեցող համայնքների թիվը	153	110	98

Տեղեկատվության հավաքագրման աղբյուրը

Ուսումնասիրության շրջանակներում տեղեկատվության հավաքագրման աղբյուրները երկուսն են.

1. www.arlis.am Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի կայքը, քանի որ ԲԿԳ հանձնառության շրջանակներում համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների

հրապարակման մեկ միասնական էլեկտրոնային հարթակ է ավելացվել իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում:

2. https://infosys.am Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ), քանի որ ՀՀ համայնքների կողմից գործարկված գրեթե բոլոր պաշտոնական համացանցային կայքերը գործում են ՀԿՏՀ հենքի վրա: Կայքերի ամբողջական ցանկը զետեղված է ՀԿՏՀ-ի սպասարկումն իրականացնող «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպության համացանցային կայքում[2]:

Նշյալ կայքում առկա է 308 համայնքային կայքի հղում, որոնք ներառում են ինչպես 3000-ից ավել բնակչություն ունեցող համայնքներ, այնպես էլ ավելի փոքր բնակչության թիվ ունեցող համայնքներ: Տվյալ ուսումնասիրության շրջանակներում ՀԿՏՀ հարթակի միջոցով ուսումնասիրվել են 3000-ից ավել բնակչություն ունեցող համայնքների պաշտոնական կայքէջերը:

Ուսումնասիրության առարկան

Հայաստանի Իրավական տեղեկատվական համակարգի www.arlis.am կայքում կուսումնասիրվի Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների

- հասանելիության ապահովումը,
- պարզ և ընդլայնված որոնման հնարավորությունը,
- օգտագործման մատչելիության ապահովում,
- համայնքների գործունեության թափանցիկության բարելավում:

Համայնքների համացանցային կայքերում կուսումնասիրվեն հետևյալ տարրերը.

- Ավագանու և համայնքապետի որոշումների ամբողջականությունը (արձանագրությունների ձևաչափը, հավելվածների առկայությունը, քվեարկության արդյունքները, կից փաստաթղթերի առկայությունը և այլն)
- Օրենքով սահմանված կարգով տեղեկատվության առկայությունը հանրային քննարկումների, լսումների, աճուրդների անցկացման վերաբերյալ
- Բյուջեի, տարեկան աշխատանքային պլանի կատարողականի վերաբերյալ հաշվետվությունները
- Հետադարձ կապի հնարավորությունը՝ տեղեկատվության հարցման միջոցով:

Ուսումնասիրության մեկ այլ առարկա է հանդիսացել նաև «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի շրջանակներում տեղեկատվության տրամադրումը: Կարևորելով ՏԻՄ աշխատանքի թափանցիկությունը և մասնակցայնությունը, և հաշվի առնելով, որ դիտարկվող կայքն ունի «Դիմել համայնքապետարան» կոճակը, ապա բոլոր ընտրված համայնքների դեպքում նախատեսվում է տեղեկատվության հարցում ուղղել համայնքի ղեկավարին՝ խնդրելով ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքին համապատասխան կարգով տրամադրել համայնքների ղեկավարների կողմից տնօրինվող մի շարք տեղեկություններ, որոնք վերաբերում

[2] 3000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների կայքերը ՀԿՏՀ կայքում

են ՏԻՄ-երի գործառույթներին և որևէ օրենքով սահմանված գաղտնիք չեն պարունակում: Այդպիսի տեղեկատվություն կարող է լինել, օրինակ՝ համայնքապետարանի աշխատակազմի 2019թ. հաստատված հաստիքացուցակը:

Մոնիտորինգի քարտը ներկայացված է Հավելված 2-ում:

Սահմանափակումներ

Ուսումնասիրության ընթացքում մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ խնդիրներ խոչընդոտեցին զեկույցի պատշաճ և ժամանակին ավարտը: Մասնավորապես, պայմանավորված համայնքներում սերվերը սնուցող համակարգչի պարբերաբար անջատումից, համայնքային պաշտոնական կայքերի մի մասը տևական ժամանակ հասանելի չեն եղել, ինչը հանգեցրել է ընտրված համայնքներից մի մասի ուսումնասիրության շրջանակից դուրս մնալուն կամ դրանց վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման ժամանակատարությանը:

Մյուս սահմանափակումը կապված է մոնիտորների կողմից տվյալադարանի ոչ ամբողջական, թերի լրացված լինելու հետ, ինչպես նաև մոնիտորների ոչ ճիշտ կամ լիարժեք ընկալմամբ պայմանավորված սիստեմատիկ սխալների հետ, ինչը հանգեցրել է տվյալ մոնիտորների ողջ աշխատանքի կրկնակի ստուգման և կրկին մուտքագրման:

Այսպիսով, նախանշված 153 համայնքների պաշտոնական կայքերից ուսումնասիրվել են 137-ը. 16 համայնքային կայք չի ուսումնասիրվել, որից մի մասը ընդհանրապես չուներ կայք (3 համայնք), մյուս մասը դատարկ էր կամ զգալի թերի տեղեկատվություն էր պարունակում (11 համայնք), և ևս երկուսի կայքերը չեն համապատասխանել ուսումնասիրության ձևաչափին՝ ունենալով այլ կառուցվածք և դասակարգման տրամաբանություն, ինչը անհնարին է դարձրել դրանց ուսումնասիրությունը միասնական գործիքակազմով:

1. Իրավական կարգավորումներ

1.1 Պաշտոնական կայքերին ներկայացվող պահանջներ

ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 26-ի «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին» թիվ 1521-Ն որոշումը[3] վերաբերում է պետական մարմինների կայքերին, սակայն որոշման 3-րդ հոդվածով առաջարկվում է տեղական ինքնակառավարման և պետական այլ մարմիններին՝ իրենց պաշտոնական կայքերը համապատասխանեցնել սույն որոշման պահանջներին:

Որոշման հավելվածի 9-րդ հոդվածում մանրամասնած են պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները, որոնց թվում պետական մարմնի կառուցվածքն է, կառուցվածքային և (կամ) առանձնացված ստորաբաժանումների, իր ենթակայության մարմինների խնդիրներն ու գործառույթները, գտնվելու վայրերը, ղեկավար կազմի կամ տեղեկատուի հեռախոսահամարները, տվյալ պետական մարմնի կառուցվածքային

[3] ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 26-ի թիվ 1521-Ն որոշում

և (կամ) առանձնացված ստորաբաժանումների, իր ենթակայության մարմինների մասին տեղեկատվություն (գտնվելու վայրը, ղեկավար կազմի և տեղեկատուի հեռախոսահամարները:

Որպես կոնտակտային տվյալ է նշվում՝ փոստի հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն, ինտերնետային կայքի հասցեն, հեռախոսահամարները, ֆաքսի համարը:

1.2 Տեղեկատվության հասանելիություն

Ներկայիս գործող «Տեղական ինքնակառավարման մասին»[4] (այսուհետ՝ Օրենք) և «Տեղեկատվության ազատության մասին»[5] ՀՀ օրենքներով սահմանված են այն տեղեկությունները, որոնք ՏԻՄ-երը, որպես տեղեկատվություն տնօրինողներ, պարտավոր են հրապարակել: Մասնավորապես, «Տեղական ինքնակառավարման մասին» 11-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանվում է 3000 կամ ավել բնակիչ ունեցող համայնքի՝ պաշտոնական կայք ունենալու պարտավորությունը և այդ կայքում պարտադիր տեղադրման ենթակա փաստաթղթերի ցանկը:

5. 3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքը պետք է ունենա պաշտոնական համացանցային կայք, որի ստեղծումն ու վարումն ապահովում է համայնքի ղեկավարը՝ սույն օրենքով և համայնքի ավագանու սահմանած կարգով: Համայնքի պաշտոնական համացանցային կայքում ներբեռնման հնարավորությամբ առնվազն պետք է առկա լինեն՝

1) համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ընդհանուր գործունեության վերաբերյալ հրապարակային տեղեկատվությունը.

2) համայնքի ղեկավարի և ավագանու ընդունած նորմատիվ իրավական ակտերը.

3) համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, ծրագրի կատարողականը ու դրա վերաբերյալ հաշվետվությունները.

4) համայնքի բյուջեն, բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունները.

5) համայնքի գործունեության վերաբերյալ ՀՀ Հաշվեքննիչ պալատի հաշվեքննության արդյունքները.

6) համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի նորմատիվ իրավական ակտերի նախագծերը.

7) համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, բացառությամբ պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող, համայնքի ավագանու համաձայնությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օտարման կամ օգտագործման տրամադրվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի ցանկի.

[4] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, 07.05.2002
[5] «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, 23.09.2003

8) համայնքի ղեկավարի լիազորությունների շրջանակում տրվող թույլտվությունների դիմումների ձևաթղթերը.

9) համայնքին վերաբերող օրենսդրական և ենթաօրենսդրական նախաձեռնությունների և նախագծերի, այդ թվում՝ համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին տեղեկատվությունը.

10) համայնքում բնակիչների հետ հանդիպումների, հանրային լսումների և քննարկումների նյութերը, ընթացակարգը, անցկացման վայրը և ժամը.

11) համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների, ինչպես նաև սույն մասի 9-րդ կետով նախատեսված այլ փաստաթղթերի վերաբերյալ անցկացված հանրային լսումների և քննարկումների արդյունքները.

12) համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության, համայնքում հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման և այլ կարգեր.

13) համայնքային խնդիրների վերաբերյալ համապատասխան քաղաքացիական նախաձեռնության մասին տեղեկացումը.

14) համայնքի ավագանու սահմանած այլ տեղեկատվություն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը տեղեկատվության մատչելիության և հրապարակայնության ապահովման համար սահմանում է տեղեկատվություն տնօրինողի պարտավորությունը տարին առնվազն մեկ անգամ հրապարակել իր գործունեությանը առնչվող հետևյալ տեղեկատվությունը.

1) հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները և ծառայությունները.

2) բյուջեն.

3) գրավոր հարցումների ձևերը և դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները.

4) հաստիքացուցակները, ինչպես նաև պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները.

5) աշխատանքի ընդունման կարգը և թափուր աշխատատեղերը.

6) շրջակա միջավայրի վրա ներգործությունը.

7) հասարակական միջոցառումների ծրագրերը.

8) քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը և վայրը.

9) աշխատանքների և ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները).

10) տնօրինվող տեղեկությունների ցանկը և դրանց տնօրինման կարգը.

11) ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը.

12) սույն մասում սահմանված տեղեկությունների մշակման կամ ստացման աղբյուրները.

13) սույն մասում սահմանված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները:

Նշյալ հոդվածի մյուս մասերով սահմանվում է, որ հրապարակված տեղեկության փոփոխության ընթացքում, տեղեկություն տնօրինողը պարտավոր է 10-օրյա ժամկետում հրապարակել փոփոխված տեղեկությունը:

1. 3 Համայնքի բնակիչների իրազեկումը և մասնակցությունը որոշումների կայացմանը

Տեղական ինքնակառավարումը՝ որպես ժողովրդավարության հիմքերից մեկը, հիմնվում է նաև տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցության սկզբունքի վրա:

Տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցությունը ապահովող մի շարք կարգավորումներ են նախատեսված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում: Մասնավորապես, կարգավորված է բնակչության ուղղակի կամ համայնքային կազմակերպությունների միջոցով միջնորդավորված մասնակցությունը համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և բյուջեի մշակման գործընթացներում, ինչպես նաև այդ փաստաթղթերի առնչությամբ կատարողականի հաշվետվողականությունը:

Այսպես, օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում հաշվետու տարում հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություն, որը ենթակա է հրապարակման՝ օրենքով սահմանված կարգով:

Օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասը կարգավորում է համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և բյուջեի կառավարման գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունը:

1. Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կամ տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ ձևավորվում է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին՝ աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ):

Նույն հոդվածը սահմանում է, որ համայնքի ղեկավարը մինչև համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կամ տարեկան բյուջեի նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ կամ քննարկումներ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի[6] 4-րդ հոդվածով սահմանված ժամկետում, որի կազմակերպման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 10.10.2018թ. թիվ 1146-Ն «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու մասին» որոշմամբ[7]: Հանրային բաց լսումներում կամ քննարկումներում ստացված և ընդունված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ համայնքի ղեկավարը տրամադրում է տեղեկատվություն համայնքի ավագանուն:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածը ևս սահմանում է համայնքի ղեկավարի լիազորությունները տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությունը հանրային բաց լսումների, քննարկումների միջոցով: Այսպես, համայնքի ղեկավարի լիազորությունն է կազմակերպել տեղական ինքնակառավարմանն առնչվող օրենսդրական և ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լսումներ կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնությունների և նախագծերի հեղինակներին:

ՀՀ կառավարության թիվ 1146-Ն որոշմամբ հաստատված կարգը սահմանում է, որ հանրային քննարկում իրականացնող մարմինն իր պաշտոնական ինտերնետային կայքում և միասնական կայքում հրապարակում է նորմատիվ իրավական ակտի նախագիծը, իրավական ակտի ընդունման հիմնավորումը, ինչպես նաև հանրային քննարկումն իրականացնող մարմնի հայեցողությամբ այլ նյութեր և իր պաշտոնական կայքում տեղադրում է միասնական կայքի համապատասխան հղումը կամ ապահովում է կայքի ավտոմատացված միացումը միասնական կայքին:

Նույն կարգի 25-րդ կետը սահմանում է, որ քննարկումների քարտուղարը պետք է կազմի քննարկումների վերաբերյալ գրավոր արձանագրություն, որն ստորագրվում է վերջինիս կողմից: Արձանագրությունում պետք է ամրագրված լինեն քննարկումներն իրականացնող մարմնի անվանումը, քննարկումների ամսաթիվը, թեման, քննարկումների մասնակիցների

[6] «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, 21.03.2018
[7] «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու մասին» թիվ 1146-Ն որոշում, 10.10.2018

առաջարկությունները: Մասնակիցները կարող են առաջարկությունները ներկայացնել նաև գրավոր: Գրավոր ներկայացված առաջարկներն ու դիտողությունները ներառվում են ամփոփաթերթում, որոնք համապատասխան հիմնավորմամբ ընդունվում կամ չեն ընդունվում: Ամփոփաթերթը, արձանագրությունը և լրամշակված նախագիծը տեղադրվում են հանրային քննարկումներ կազմակերպող մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև միասնական կայքում:

1.4 Ավագանու նիստեր

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը[8] կարգավորում է ավագանու նիստերի մասին տեղեկացման պարտավորությունը, ինչպես նաև նստաշրջանի ընթացքում հերթական նիստերի և արտահերթ նիստերի անցկացումը:

Այսպես, օրենքի 15-րդ հոդվածը, որը վերաբերում է համայնքի ավագանու նիստերի մասին տեղեկացմանը, սահմանում է հետևյալը.

1) ավագանու հերթական նիստից առնվազն յոթ օր առաջ համայնքի ղեկավարը հրապարակում է ավագանու նիստի օրակարգի նախագիծը՝ նշելով նիստի անցկացման վայրը և ժամանակը: Հրապարակումն իրականացվում է համայնքներում՝ համայնքի ավագանու նստավայրում դրանք փակցնելու միջոցով, ինչպես նաև այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երկու հազար բնակչի համար:

2) 3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներում այդ տեղեկությունը հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցներով կամ համացանցային ցանցի, այդ թվում՝ համայնքի պաշտոնական համացանցային կայքի միջոցով:

3) Ավագանու անդամներին տրամադրված, նիստի հետ կապված փաստաթղթերը, եթե դրանք քննարկվելու են հրապարակային նիստում, պետք է դրված լինեն համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար մատչելի տեղում, իսկ 3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներում՝ նաև համայնքի պաշտոնական համացանցային կայքում՝ ներբեռնման հնարավորությամբ:

4) Յուրաքանչյուր ոք իրավունք ունի պահանջելու և օրենքով սահմանված կարգով ստանալու սույն հոդվածով նախատեսված փաստաթղթերն ու տեղեկատվությունը:

Նույն օրենքի 62-րդ հոդվածը սահմանանում է հերթական նստաշրջանների և նիստերի ժամկետները համամասնական ընտրակարգով ընտրված ավագանի ունեցող համայնքներում: Ըստ այդ կարգավորման ավագանու հերթական նստաշրջանները գումարվում են փետրվարի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև հունիսի վերջին չորեքշաբթին և սեպտեմբերի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև դեկտեմբերի վերջին չորեքշաբթին: Նստաշրջանի ընթացքում յուրաքանչյուր ամիս հրավիրվում է ավագանու առնվազն մեկ նիստ:

[8] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք

Ավագանու արտահերթ նիստի գումարման համար պայմանները նախատեսված են 65-րդ հոդվածի, ըստ որի նիստը գումարում է համայնքի ղեկավարը կամ ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը: Արտահերթ նիստ գումարելու կարգը սահմանվում է ավագանու կանոնակարգով: Ավագանու արտահերթ նիստն անցկացվում է նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետում, սակայն նախաձեռնությունից ոչ շուտ, քան երեք օրից: Արտահերթ նիստի օրակարգը, դրանում ընդգրկված հարցերի որոշման նախագծերը և դրանց կցված փաստաթղթերն ավագանու անդամներին տրամադրվում են արտահերթ նիստը նախաձեռնելուց հետո՝ ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում: Նույն ժամկետում այդ նյութերը պետք է տեղադրվեն նաև համայնքի պաշտոնական կայքում:

1.5 Շահերի բախում

Համայնքի ավագանու անդամի պարտականությունները սահմանող «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 7-րդ կետերը որոշակիորեն կարգավորում են ավագանու անդամի համար շահերի բախման իրավիճակները: Այսպես, օրենքը սահմանում է.

6) չմասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր) շահերին.

7) անհամատեղելի պաշտոններում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում անհապաղ գրավոր տեղյակ պահել ավագանուն կամ համայնքի ղեկավարին.

Համայնքային ծառայողի համար շահերի բախման իրավիճակները սահմանում է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի[9] 33-րդ հոդվածը: Նախ, հոդվածի 1-ին մասը սահմանում է շահերի բախումը՝ որպես իրավիճակ, երբ պաշտոն զբաղեցնող անձն իր լիազորություններն իրականացնելիս կատարում է գործողություն կամ ընդունում որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել: Պաշտոն զբաղեցնող անձի՝ իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելը նշանակում է անձի լիազորությունների շրջանակում այնպիսի գործողություն կատարելը կամ որոշում ընդունելը (այդ թվում՝ կոլեգիալ մարմնի կազմում որոշում ընդունելուն մասնակցելը), որը թեև ինքնին օրինական է, սակայն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել նաև՝

1) իր կամ իր հետ փոխկապակցված անձի գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

2) իր կամ իր հետ փոխկապակցված անձի անդամակցած ոչ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

3) իր կամ իր հետ փոխկապակցված անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

[9] «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, 23.03.2018թ.

4) իր հետ փոխկապակցված անձին պաշտոնում նշանակմանը:

Սույն օրենքի իմաստով փոխկապակցված անձինք են պաշտոն զբաղեցնող անձի ամուսինը, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը, պապը, տատը, թոռը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, մորեղբայրը, քրոջ, եղբոր զավակները, պաշտոն զբաղեցնող անձի մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր, մորեղբոր զավակները, քրոջ, եղբոր, զավակի ամուսինները:

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ պաշտոն զբաղեցնող անձը պետք է խուսափի շահերի բախման հանգեցնող գործողություններից, ձեռնպահ մնա շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելուց կամ որոշում ընդունելուց: Եթե պաշտոն զբաղեցնող անձի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը կամ որոշման ընդունումը կարող է հանգեցնել շահերի բախման, ապա պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին (եթե վերադաս կամ անմիջական ղեկավար ունի) ներկայացնել գրավոր հայտարարություն շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին, որը ենթակա է քննարկման անհապաղ: Նախքան վերադասի կամ անմիջական ղեկավարի գրավոր համաձայնությունը ստանալը անձը պետք է ձեռնպահ մնա հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց կամ որոշում կայացնելուց:

Իսկ վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող պաշտոն զբաղեցնող անձը կարող է այդ մասին գրավոր հայտարարություն ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, որն առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր, այդ թվում՝ հանդես գալ կոնկրետ իրավիճակում շահերի առկայության մասին հայտարարությամբ:

Նույն՝ 33-րդ հոդվածի 7-րդ մասում նշվում է, որ սույն հոդվածի դրույթները տարածվում են պետական պաշտոն զբաղեցնող անձանց, 15.000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև հանրային ծառայողների վրա:

Հոդվածի 9-րդ մասը սահմանում է, որ շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելը կամ որոշում ընդունելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն: Սակայն, կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները կիրառելի չեն քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ: Իսկ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի[10] 5-րդ հոդվածի 3-րդ մասի համայնքի ավագանու անդամը հանդիսանում է համայնքային քաղաքական պաշտոն:

1.6 Աճուրդների կազմակերպում

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման ամենատարածված եղանակը՝ աճուրդային կարգով օտարումն է: Այս գործընթացի նախապատրաստումը և կազմակերպումը նկարագրված է մի շարք իրավական ակտերում:

[10] «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, 23.03.2018թ.

Մասնավորապես, ՀՀ Հողային օրենսգրքի[11] 68-րդ հոդվածը կարգավորում է աճուրդի կազմակերպումը և իրականացումը, համաձայն որի աճուրդի կազմակերպիչը համայնքի ղեկավարն է: Հողամասի աճուրդը կազմակերպելու համար աճուրդի կազմակերպիչն իր իրավասության շրջանակում ստեղծում է աճուրդային հանձնաժողով, որի կազմում կարող են ընդգրկվել համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետներ և ավագանու անդամներ:

Նույն հոդվածը սահմանում է նաև, որ Կազմակերպիչն աճուրդի անցկացումից մեկ ամիս առաջ մամուլով, զանգվածային լրատվության այլ միջոցներով և ՀՀ հրապարակային ծանուցումների www.azdarar.am պաշտոնական կայքէջում, մարզպետարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև առկայության դեպքում համայնքի պաշտոնական կայքէջում հրապարակում է սակարկությունների անցկացման տեղը, օրը, ժամը, հողամասի գտնվելու վայրը, չափերը, ծածկագիրը, մեկնարկային գինը, նախավճարը, քայլի չափը, օգտագործման նպատակը, ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալները (գյուղատնտեսական հողամասերի դեպքում՝ նաև որակական հատկանիշները), ինչպես նաև տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը:

«Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման[12] 2-րդ հոդվածը սահմանում է, որ աճուրդային կարգով հողամասերի օտարման և մրցութային կարգով վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման մասին հայտարարությունները պարտադիր հրապարակվում են «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, ընդ որում, աճուրդների վերաբերյալ հայտարարություններում ներառվում են ՀՀ հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով, մրցույթների դեպքում՝ 78-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված բոլոր տեղեկությունները:

2. Համայնքի ղեկավարի և ավագանու հետ հետադարձ կապ

2.1 Համայնքի ղեկավարի և ավագանու վերաբերյալ հասանելի տեղեկատվություն

Համայնքի ղեկավարի և ավագանու անդամների հետ կապի ապահովման և հետադարձ կապի տեսանկյունից ուսումնասիրվել է, թե ինչ կոնտակտային տվյալներ են հասանելի, որոնց միջոցով համայնքի բնակիչները կարող են կապ հաստատել տեղական իշխանության ներկայացուցիչների հետ:

Ուսումնասիրված 137 համայնքների ավագանիների հանրագումարային թիվը կազմում է 1472, որոնցից 57,9% բջջային հեռախոսահամարներն էին հասանելի, և միայն 10,9%-ի՝ էլ. փոստի հասցեները: Մնացածի՝ ավագանու անդամների ընդհանուր թվի գրեթե կեսի վերաբերյալ, որևէ կոնտակտային տվյալ առկա չէ կայքերում:

[11] ՀՀ Հողային օրենսգիրք, 02.05.2001թ.
[12] ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշում

Գծապատկեր 1. Համայնքի ավագանու հասանելի կոնտակտային տվյալները (n=1472, %)



Պատկերն ամբողջացնելու տեսանկյունից դիտարկվել են կոնտակտային տվյալների հասանելիությունը նաև առանձին վերցրած համայնքների կտրվածքով: Այսպես, գրեթե յուրաքանչյուր երրորդ (28,5%) ուսումնասիրված համայնքում առկա չէ ավագանու անդամներից և ոչ մեկի ոչ հեռախոսահամարը, ոչ էլ.փոստի հասցեն: Իսկ ուսումնասիրված համայնքների 78,1%-ում ոչ մի ավագանու անդամի էլ.փոստի հասցե առկա չէ:

Գծապատկեր 2. Ավագանու անդամների կոնտակտային տվյալների հասանելիությունը՝ ըստ համայնքների (n=137, %)



Ուսումնասիրվել է նաև համայնքի ղեկավարին կամ համայնքապետարան դիմելու հնարավորությունները: Այսպես, կեսից ավելի դեպքերում (54,7%) հասանելի է էլեկտրոնային փոստով համայնքապետարան դիմելու հնարավորությունը: Համայնքների միայն մեկ երրորդ դեպքերում է հասանելի համայնքապետի հեռախոսահամարը, 22,6% դեպքերում ոչ մի հեռախոսահամար առկա չէ համայնքապետի կամ համայնքապետարանի հետ կապ հաստատելու համար, իսկ 18,2% չկա ոչ որևէ հեռախոսահամար, ոչ էլ.փոստի հասցե:

Գծապատկեր 3. Համայնքի ղեկավարի կոնտակտային տվյալների հասանելիությունը (N=137, %)



2.2 Առցանց դիմում, բողոք, հարցում ներկայացնելու հնարավորություն

Համայնքային բոլոր կայքերում առկա է «Դիմել համայնքապետարան» բաժինը, որը հնարավորություն է տալիս առցանց դիմում, հարցում, բողոք ուղարկել համայնքապետարան: Ներկայացված դիմում, հարցում, բողոքների թվի վերաբերյալ վիճակագրությունն՝ ըստ ամիսների ներկայացված է 2018 թվականից սկսած: Այս բաժնի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այս հնարավորությունը չի օգտագործվում կամ գրեթե չի օգտագործվում համայնքի բնակիչների կողմից: Այսպես, 2018թ. ընթացքում 137 համայնքային կայքի այս բաժնում գրանցված է, ընդհանուր առմամբ, 192 դիմում, բողոք, հարցում, իսկ ուսումնասիրված համայնքներից 83-ում ամբողջ տարվա ընթացքում ոչ մի դիմում, բողոք, հարցում չի ներկայացվել:

Գծապատկեր 4. 2018թ. կայքի միջոցով ներկայացված էլեկտրոնային դիմում, հարցումների, բողոքների ընդհանուր թիվը (N=137)



Պետք է նշել, որ կայքի միջոցով առանց իսկորոշման ուղարկված նամակները չեն համարվում պաշտոնական և համայնքապետարանի համար բացառապես տեղեկատվական բնույթ են կրում և կարող են անարձագանք մնալ, քանի որ ենթակա չեն պաշտոնական ընթացակարգով քննության: Իսկորոշման երկու տարբերակները, որոնք առկա են այս բաժնում, դժվար հասանելի են, քանի որ հատուկ տեխնիկական միջոցներ են պահանջում: Ուսումնասիրված համայնքներից 83-ում, ինչը 60,6% է, 2018թ. ընթացքում պաշտոնական կայքի միջոցով ոչ մի դիմում, բողոք, հարցում չի ներկայացրել:

Նշենք, որ միայն պատշաճ իսկորոշման պարագայում ուղարկված հարցում, բողոք, դիմումը, ինչը ենթադրում է նույնականացման քարտի առկայությունը և տեխնիկական սարքերի առկայություն դեպքում միայն կարող է համարվել պաշտոնական, ինչը բնակչության մեծամասնության համար այս հնարավորությունը դարձնում է անհասանելի:

2.3. Հանրային լսումներ և քննարկումներ

Ուսումնասիրվող համայնքների պաշտոնական կայքերում հանրային քննարկում/լսում կազմակերպելու մասին «հայտարարություն», «նորություն» բաժիններում որոնման արդյունքում պարզվեց, որ 2018թ. ընթացքում կայքերից գրեթե 2/3-ում որևէ նյութ՝ հայտարարություն հանրային լսումներին և/կամ քննարկումներին վերաբերող չկա:

Ուսումնասիրված համայնքներից 87-ի համայնքային պաշտոնական կայքում հանրային լսումների և/կամ քննարկումների մասին ոչ մի նյութ չկա ողջ 2018թ. ընթացքում:

Գծապատկեր 5. Հանրային լսումների/քննարկումների վերաբերյալ տեղեկատվության առկայություն



Մնացած 50 համայնքային կայքում առկա է, ընդհանուր առմամբ, 182 հայտարարություն հանրային լսումների և քննարկումների կազմակերպման մասին, որի թիվը յուրաքանչյուր համայնքում տատանվում է 1-ից 9-ը: Սակայն հայտարարությանը կից փաստաթղթեր առկա են 50-ից միայն 18 համայնքի դեպքում, այն էլ հիմնականում կցվում են ոչ քննարկման առարկա հանդիսացող փաստաթղթեր, այլ, օրինակ, նույն հայտարարության ֆայլը: Շատ հաճախ հայտարարության մեջ նշվում է, որ փաստաթղթերին կարող են ծանոթանալ այցելելով համայնքապետարան: Ուսումնասիրված համայնքներից ոչ մեկում հանրային

լսումների/քննարկումների հեռարձակման ոչ հողում, որ տեսագրություն առկա չէ, իսկ արձանագրությունը առկա է միայն երկու դեպքում:

2.4. Ավագանու նիստեր

Համայնքային պաշտոնական կայքերում ավագանու նիստեր բաժնում հասանելի է հետևյալ տեղեկատվությունը. նիստի հերթական համարը, ամսաթիվը, վարողը, տեսակը՝ հերթական, արտահերթ, որոշումների նախագծերը և ընդունված որոշումները, նիստի տեսագրությունը և արձանագրությունը: Սույն ուսումնասիրություն շրջանակներում առկա տեղեկատվությունից առանձնացվել և ուսումնասիրվել են հետևյալ հարցերը.

1. ո՞ր թվականից են առկա նիստերի մասին տեղեկատվությունը,

2. 2018թ. ընթացքում քանի՞ ավագանու նիստ է գումարվել, որից՝ հերթական և արտահերթ,

3. կայացած նիստերից քանիսի՞ արձանագրությունն է առկա,

4. ի՞նչ ձևաչափով են առկա արձանագրությունները,

5. Արձանագրությանը կից փաստաթղթերի առկայությունը,

6. 2018թ. ընթացքում կայացած նիստերից քանիսի տեսագրությունն է առկա:

Ավագանու նիստերի վերաբերյալ փաստաթղթերը պաշտոնական կայքեր հիմնականում ներմուծվել և հասանելի են դարձել 2009 թվականից սկսած (13% համայնքներում), սակայն կայքերում այս բաժնի թարմացումները առավել մեծ մասն են կազմում 2013թ. (մոտ 30%): Ուսումնասիրված համայնքների 1,3% դեպքերում ընդհանրապես չկա որևէ եղեկատվություն նիստերի վերաբերյալ:

Գծապատկեր 6. Ավագանու նիստերի վերաբերյալ տեղեկատվության առկայություն



2018թ. ընթացքում ուսումնասիրված համայնքներում, ընդհանուր առմամբ, իրականացվել է 1447 ավազանու նիստ, որից 894 հերթական, 549 արտահերթ: Հերթական և արտահերթ նիստերին առնչվող իրավակարգավորումների համաձայն տարվա երկու նստաշրջանների 9 ամիսների ընթացքում պետք է գումարվի առնվազն 9 հերթական նիստ՝ յուրաքանչյուր ամիս առնվազն մեկը, սակայն 84,6% համայնքներում իրականացվել են 9-ից պակաս թվով հերթական նիստեր՝ խախտելով օրենքի պահանջը նիստերի գումարման առնչությամբ:

Գծապատկեր 7. Հերթական նիստերի թիվը 2018թ. ընթացքում



Ավելին, նշենք, որ որոշ համայնքներում (19,7%) նույնիսկ արտահերթ նիստերի թիվը գերազանցում է հերթական նիստերի թվին: Այսպես, օրինակ, Չարենցավանում գումարվել է 1 հերթական և 11 արտահերթ նիստ, Գեղաշեն համայնքում 1 հերթական և 10 արտահերթ նիստ, Անի համայնքում 1 հերթական և 9 արտահերթ նիստ: Կա նաև դեպք, երբ ողջ տարվա ընթացքում մեկ նիստ է գումարվել, կամ առնվազն մեկի մասին կա հասանելի տեղեկատվություն, և այդ մեկ նիստը արտահերթ է (գ. Ազատամուտ): Ուսումնասիրված համայնքներից 14,6%-ում արտահերթ նիստ չի գումարվել:

Գծապատկեր 8. Արտահերթ նիստերի թիվը 2018թ. ընթացքում



Նիստերի գումարման հաճախականությունից բացի ուսումնասիրվել է նաև ավագանու նիստերի արձանագրությունների առկայությունը պաշտոնական կայքում: Տարվա ընթացքում գումարած 1447 ավագանու նիստերից միայն 285 նիստի արձանագրություն է առկա, ինչը կազմում է մոտ 20%: Պետք է նշել, որ թեև ամբողջական ուսումնասիրություն չի իրականացվել արձանագրություն բաժնում կցված փաստաթղթերի բովանդակության առնչությամբ, սակայն մի մասի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բավական հաճախ են այն դեպքերը, երբ արձանագրություն բաժնի ներքո այլ փաստաթղթեր են ներկայացված, ինչպես օրինակ նիստի օրակարգ, ավագանու որոշում(ներ) և այլն:

Բաց տվյալների տեսանկյունից կարևոր է հասկանալ, թե ինչ ձևաչափով են հասանելի արձանագրությունները, արդյոք ձևաչափը ապահովում է որոնելիություն և մեքենայական մշակման հնարավորություն: Այսպես, ուսումնասիրությունը ցույց տվեց, որ համայնքային պաշտոնական կայքերում հասանելի արձանագրությունների գրեթե կեսը՝ 46,9%-ը ներկայացված է word ձևաչափով և ուղիղ կեսը՝ 52,4% PDF ֆորմատով և 0,7% այլ ձևաչափերով:

Գծապատկեր 9. Արձանագրության ձևաչափը



Արձանագրությունների հետ կապված մյուս չափանիշը, որն ուսումնասիրվել է՝ դրանց ստորագրված լինելն է ավագանիների կողմից: Այսպես, 40 համայնքներից, որոնց պաշտոնական կայքում հասանելի են արձանագրությունները, 26-ը PDF ֆորմատով են ներկայացված: Դրանցից ուղիղ կեսում առկա են ավագանու ստորագրությունները, մնացած մասում՝ մասամբ (15,4%) կամ ընդհանրապես ստորագրված չեն (34,6%):

Գծապատկեր 10. Ավագանու նիստերի արձանագրությունների տեսքը (%)



Ավագանու որոշումների ընդհանրացված քանակական ուսումնասիրությունից բացի իրականացվել է նաև որոշ առանցքային բառերով որոնման արդյունքում առանձնացված որոշումների բովանդակային ուսումնասիրություն: Ընդհանուր առմամբ ուսումնասիրվել է 470 ավագանու որոշում՝ յուրաքանչյուր համայնքից ընտրելով 3-ից 7 որոշում՝ կախված համայնքի մեծությունից: Ընտրվել են որոշումներ հետևյալ առանցքային բառերով՝ բյուջե, տարեկան աշխատանքային պլան, դրույքաչափ,հաստիքացուցակ, հաշվետվություն, վաճառք/օտարում, աճուրդ, տարեկան աշխատանքային պլան և այլն, որոնք ենթադրում են որոշմանը կից փաստաթղթերի ներկայացում:

Ինչպես նշվել էր իրավակարգավորումներ բաժնում 10000 և ավել բնակիչ ունեցող համայնքներում ավագանու հրապարակային նիստերը պետք է առցանց հեռարձակվեն համայնքի պաշտոնական համացանցային կայքում: Մեր ուսումնասիրության շրջանակը ընդգրկող 137 համայնքների շարքում 10 հազար և ավելի բնակչություն ունեն 40 համայնքներ: Նշյալ համայնքներում տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, ներկայացված է 445 նիստ, որից 25,8%-ի (115 նիստ) տեսագրություններն են առկա:

Գծապատկեր 11. Նիստերի հեռարձակումը 10000-ից ավել բնակչություն ունեցող համայնքներում *(N=445)*



Ավելին, գնահատվել է նաև տեսագրության հղման աշխատանքը և որակը այն 21 համայնքների պարագայում, որոնք տեսահոլովակ բաժնում հղում ունեն: Այսպես, նիստերի հեռարձակման բոլոր հասանելի հղումներից միայն 76,2% է գործում, մնացած ¼ մասը՝ ոչ: Պետք է նշել, որ, այնուամենայնիվ, հղում պարունակող 19% համայնքների youtub-յան էջերում նիստերի հեռարձակումները հասանելի են:

Գծապատկեր 12. Ավագանու նիստերի հեռարձակման տեսագրության հասանելիությունը



Հասանելի տեսագրությունների 76,2% որակական առումով գնահատվել են «լավ, հստակ լսելի», իսկ 23,8%-ը՝ միջին որակի:

Գծապատկեր 13. Ավագանու նիստերի տեսագրությունների որակը



Դիտարկված 137 համայնքներում 2018թ. ընթացքում ավագանու կողմից, ընդհանուր առմամբ, իրականացվել է 199 հազար 121 միավոր քվեարկություն: Ընդունելով այս թիվը որպես ամբողջություն՝ 100 տոկոս, և, առանձնացնելով՝ ըստ քվեարկության տարբերակների, ստացվում է հետևյալ պատկերը. բոլոր քվեարկությունների 98,6%-ը եղել է «կողմ», չնչին տոկոս են կազմել «դեմ» և «ձեռնպահ» քվեարկությունները:

Գծապատկեր 14. Ավագանու քվեարկության (n=199121, %)



Ավելին, ուսումնասիրված 137 համայնքներից 53-ում (38,7%) 2018թ. ընթացքում որևէ ավագանու անդամի կողմից որևէ հարցի շուրջ ողջ տարվա ընթացքում «դեմ» կամ «ձեռնպահ» քվեարկություն չի գրանցվել, այլ կերպ ասած՝ ուսումնասիրված համայնքներից յուրաքանչյուր երրորդ համայնքում ամբողջ տարվա ընթացքում բոլոր որոշումներն առանց բացառության ընդունվել են միաձայն կողմ քվեարկությամբ:

Ավագանու կողմից ընդունած որոշումներ

Նախ՝ ուսումնասիրվել են 2018թ. ընդունված ավագանու որոշումների հասանելիությունը և ամբողջականությունը: Տարվա ընթացքում ուսումնասիրված համայնքներում ավագանու կողմից կայացվել է, ընդհանուր առմամբ, 8787 որոշում: Որոշումների համարակալման միջոցով ցանկի ամբողջականության գնահատմանն արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը. ուսումնասիրված համայնքների 64,2%-ում առկա են ավագանու բոլոր որոշումները, 34,3%-ում ոչ բոլոր որոշումներն են հասանելի, ընդ որում, բացակայող որոշումների թիվը տատանվում է 1-ից մինչև 25, իսկ երկու համայնքների դեպքում որոշումներն ընդհանրապես առկա չեն:

Գծապատկեր 15. Համայնքի ավագանու որոշումների հասանելիության ամբողջականությունը



Համայնքի ղեկավարի ընդունած որոշումներ

2018թ. համայնքների ղեկավարների կողմից կայացվել է, ընդհանուր առմամբ, 36579 որոշում, ընդ որում տարվա ընթացքում կայացրած որոշումների թվի տարբերությունը ահռելի է. մի դեպքում 3 որոշում (4352 բնակչություն), 5 որոշում (5891 բնակչություն)՝ տարվա ընթացքում և 1429 որոշում (59469 բնակչություն), 1303 (25708 բնակչություն): Այս տվյալների նախնական վերլուծությունը վկայում է, որ որոշումների թվի նման տարբերությունը պայմանավորված չէ համայնքի մեծությամբ, այստեղ այլ գործոններ են ազդում այս պատկերի վրա:

Գծապատկեր 16. Համայնքի ղեկավարի կողմից ընդունած որոշումների հասանելիություն և ամբողջականություն



2.5. Շահերի բախում

Ուսումնասիրված համայնքների կայքում ավագանու կանոնակարգի առկայությանը զուգահեռ ուսումնասիրվել է կանոնակարգում շահերի բախմանն առնչվող կարգավորումների առկայությունը: Համայնքների ¼-ի կայքերում հասանելի չէր ավագանու կանոնակարգը: 75,9% դեպքերում կանոնակարգը առկա էր, սակայն միայն 58,4% համայնքների դեպքում կանոնակարգում նշված էր շահերի բախմանն առնչվող հետևյալ՝ նույնանման կետը.

20. Շահերի բախումը

1. *Ավագանու անդամը չի կարող մասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր ընտանիքի անդամների և մերձավոր բարեկամների (ծնող, քույր, եղբայր, երեխա) շահերին:*
2. *Եթե առկա է վերը նշված հանգամանքներից որևէ մեկը, ապա համայնքի ավագանին տեղեկացվում է դրա մասին նախքան տվյալ հարցի քննարկման և քվեարկության սկսելը:*
3. *Եթե շահերի բախման առկայության դեպքում ի հայտ են գալիս վիճահարույց հանգամանքներ, ապա համայնքի ավագանին հետաձգում է որոշման կայացումը՝ լրացուցիչ պարզաբանումներ կատարելու նպատակով:*

Որոշ դեպքերում շահերի բախմանն առնչվող դրույթներ են սահմանվում նաև Ավագանու անդամի պարտականություններին վերաբերող կետերում, ինչպես օրինակ.

4. չմասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր ընտանիքի անդամների և մերձավոր բարեկամների /ծնող, եղբայր, քույր, երեխա/ շահերին,
5. անհամատեղելի պաշտոններում ընտրվելու կամ նշանակելու դեպքում, անհապաղ գրավոր տեղյակ պահել ավագանուն կամ համայնքի ղեկավարին:

Գծապատկեր 17. Ավագանու կանոնակարգի առկայությունը և շահերի բախման դրույթը



Միաժամանակ, թեև դա չի հանդիսանում այս ուսումնասիրության առարկան, պետք է նշել, որ շատ դեպքերում կայքում հասանելի չէ գործող ավագանու կողմից հաստատված կանոնակարգը, այն կամ հին է, կամ ուղղակի word ֆայլի տեսքով տեղադրված փաստաթուղթ է: Նշենք, որ այս ուսումնասիրության շրջանակներում դիտարկվել են ցանկացած ֆորմատի և ցանկացած ժամանակահատվածում ընդունած կանոնակարգերը:

2.6. Աճուրդների կազմակերպում

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային կարգով օտարման վերաբերյալ հայտարարությունների և փաթեթների հրապարակումը ինտերնետային կայքերում համադրվել է համայնքի ղեկավարի կողմից աճուրդի արդյունքների հիման վրա օտարելու վերաբերյալ որոշումների հետ: Համադրության արդյունքում ստացվել է հետևյալ պատկերն, ընդհանուր առմամբ, 2018թ. ընթացքում առկա է համայնքապետի 1292 որոշում աճուրդի արդյունքներով օտարման վերաբերյալ, սակայն աճուրդի անցկացման վերաբերյալ ընդամենը 201 հայտարարություն է եղել:

Համայնքային կայքերի «հայտարարություններ», «իրադարձություններ» և «նորություններ» բաժիններում որոնման արդյունքներից պարզ է դառնում, որ 83 (60,6%) համայնքային կայքում չկա աճուրդ-վաճառք կազմակերպելու վերաբերյալ ոչ մի հայտարարություն կամ հիշատակում: Մինչդեռ, առանձին դեպքերում համայնքի ղեկավարի կողմից աճուրդ-վաճառքի արդյունքում օտարման վերաբերյալ կայացրած որոշումների հետ համադրումը հետաքրքիր արդյունք է արձանագրում: Այսպես, օրինակ, Կարբի համայնքում չկա աճուրդ վաճառք կազմակերպելու մասին որևէ հայտարարություն, սակայն առկա է համայնքապետի 59 որոշում աճուրդ-վաճառքում հաղթած քաղաքացուն համայնքապատկան հողամասը վաճառելու մասին: Նմանապես, Աշտարակում՝ 42 որոշում և ոչ մի հայտարարություն, Գավառում՝ 43 որոշում և ոչ մի հայտարարություն, Դիլիջան և Իջևանում՝ 37-ական որոշում և ոչ մի հիշատակում, Ծողակաթում (Ծորժա) 35 որոշում, ոչ մի հայտարարություն, Հրազդանում՝ 49 որոշում և ընդամենը երկու հայտարարություն: Ամենամեծ թվով՝ 128 օտարման որոշում արձանագրվել է Աբովյան քաղաքում, սակայն պետք է նշել, որ այս համայնքի պաշտոնական կայքում հասանելի է 25 հայտարարություն, որոնցից յուրաքանչյուրում մեկից ավելի լոտեր կան:

Ուսումնասիրված համայնքներից 27-ում ոչ աճուրդ-վաճառքի հայտարարություն կա, ոչ դրա արդյունքում օտարման վերաբերյալ համայնքապետի որոշում, ինչը այս պարագայում տրամաբանական է:

Եզրակացություններ և առաջարկներ

1. Համայնքապետարանի, համայնքի ղեկավարի և ավագանու հասանելիության մասին

Հաշվի առնելով, այն հանգամանքը, որ ուսումնասիրված համայնքների ավագանու անդամների միայն 57,9%-ի բջջային հեռախոսահամարներն են հասանելի համայնքային կայքերում, և միայն 10,9%-ի՝ էլ. փոստի հասցեներն են հասանելի, ինչը քաղաքացիների համար պատշաճ հասանելիություն չի ապահովում իրենց համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների այս խմբին, առաջարկվում է բոլոր համայնքապետերին՝ համայնքների պաշտոնական համացանցային կայքերում պատշաճ ներկայացնել համայնքի ավագանու բոլոր անդամներին և խմբակցություններին. ավագանու անդամների կենսագրականները, հեռախոսահամարները, էլեկտրոնային հասցեները, ֆեյսբուքյան էջերի առկայության դեպքում՝ նաև դրանք, խմբակցությունների գործունեության գրասենյակների հասցեները, հեռախոսահամարները, էլեկտրոնային հասցեները, ֆեյսբուքյան էջերը, եթե այդպիսիք կան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքապետարանների կեսից ավելի դեպքերում (54,7%) է միայն հասանելի էլեկտրոնային փոստով համայնքապետարան դիմելու հնարավորությունը, իսկ համայնքների միայն մեկ երրորդի դեպքում է հասանելի համայնքապետի հեռախոսահամարը, առաջարկվում է բոլոր համայնքապետերին՝ վերակառուցել և լրացնել համայնքների պաշտոնական համացանցային կայքերը, դրանցում հեշտ հասանելի և տեսանելի կերպով ներկայացնել համայնքապետարան դիմելու մեխանիզմները, առնվազն՝ համայնքապետարանի փոստային առաքման հասցեն, էլեկտրոնային այնպիսի հասցե, որը մշտապես հսկվում է համապատասխան աշխատակցի կողմից, հեռախոսահամար(ներ), առկայության դեպքում՝ ֆեյսբուքյան էջի հասցեն/հղումը, ինչպես նաև համայնքապետի կենսագրականը, ծառայողական հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն, և ֆեյսբուքյան էջը, եթե կա այդպիսին: Հարկավոր է կանոնակարգել այդ կոնտակտներին եկող դիմումների, հայտերի և զանգերի բարեխիղճ հսկողությունը:

2. Առցանց դիմում, բողոք, հարցում ներկայացնելու հնարավորության մասին

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2018 թվականին յուրաքանչյուր համայնքապետարան միջին հաշվով ստացել է ընդամենը 1,5 էլեկտրոնային դիմում, ընդ որում ուսումնասիրված 137 համայնքներից 83 համայնքում ընդհանրապես որևէ էլեկտրոնային դիմում չի ստացվել, նկատելով, որ քաղաքացիների էլեկտրոնային կապի ակտիվացման խնդիրը միայն մասնակիորեն է կախված համայնքապետերից, առաջարկվում է հանրային իրազեկման արշավ ծավալել և այդ արշավը շարունակաբար իրականացնել տեղական ԶԼՄ-ներով, հաղորդումներով, սոցիալական հեռուստատեսային, ռադիո, ֆեյսբուքյան հոլովակներով

հանրամատչելի կերպով ներկայացնել քաղաքացիներին, թե ինչպես նրանք կարող են իրենց հուզող հարցերով և խնդիրներով էլեկտրոնային եղանակով դիմել համայնքապետարան:

3. Հանրային լսումների և քննարկումների արդյունավետության բարձրացման մասին

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսումնասիրված համայնքների պաշտոնական համացանցային կայքերից 2/3-ում հանրային լսումների իրազեկումների կամ արդյունքների մասին որևէ տեղեկություն չկա, սակայն բոլոր համայնքներում տարեկան առնվազն 2 հանրային լսում կամ քննարկում անցկացվել է, և, ընդ որում, ուսումնասիրված 137 համայնքներից 87-ի կայքերում ընդհանրապես որևէ լուր կամ հայտարարություն չկա հանրային լսումների մասին, առաջարկվում է համայնքապետերին՝ հանձնարարել կարգավորել կամ ձևավորել համայնքապետարանի կողմից հանրությանը պատշաճ կերպով և պրոակտիվ (նախաձեռնողական) իրազեկման մեխանիզմները այնպես, որ կայանալիք հանրային լսումների կամ քննարկումների մասին իրազեկումը կատարվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի պահպանմամբ, ժամանակին հրապարակվեն հայտարարությունները, հնարավորության դեպքում իրազեկումը իրականացնել նաև տեղական զանգվածային լրատվամիջոցներով, բազմաբնակավայր համայնքների բոլոր բնակավայրերում ցուցանակների վրա փակցվող հայտարարություններով և այլն:

Սրանից բացի, առաջարկվում է հանրային լսումներին պատշաճ հանրային մասնակցություն ապահովելու և ավելի որակյալ արդյունքների հասնելու համար օգտագործել վիրտուալ սոցիալական ցանցերի հնարավորությունները՝ Ֆեյսբուք, Թվիթեր, Տիկտոկ, իրազեկման հայտարարություններ տարածել նաև դրանցով, ինչպես նաև՝ Յութուբ կամ ֆեյսբուք ցանցերում ապահովել հանրային լսումների ուղիղ հեռարձակումը և պահպանել տեսագրությունները համայնքային տեսադարանում, ապահովելով հղումների առկայությունը համայնքային կայքում:

Առաջարկվում է նաև համայնքի համացանցային կայքում հրապարակել կայացած հանրային լսումների ընթացքի մասին տեղեկությունները. օրակարգը, ելույթների գրավոր տեքստերը, գրավոր առաջարկությունները, հնարավոր նախագծերը, մասնակիցների ցուցակը, հնարավոր լուսանկարները, գծագրերը և այլն:

4. Ավագանու նիստերի, ավագանու որոշումների և համայնքապետերի ընդունած իրավական ակտերի մասին

Հաշվի առնելով ավագանու կայացած նիստերի, ավագանու և համայնքի ղեկավարի ընդունած իրավական ակտերի մասին տեղեկությունների մեծ պակասը համացանցային կայքերում, ինչը դիտարկվել է մոնիտորինգի ընթացքում, առաջարկվում է համայնքային համացանցային կայքերում ավագանու նիստերի իրազեկման օրվա, ժամի և վայրի մասին իրազեկման հետ հրապարակել նաև որոշումների բոլոր նախագծերը, դրանց հիմնավորումները և բոլոր հավելվածները, այդ իրազեկումները և հարակից փաստաթղթերը չհեռացնել կայքից, ինչպես նաև նիստից հետո հրապարակել արդեն ընդունված որոշումները՝ հարակից բոլոր փաստաթղթերով: Այդպիսով քաղաքացիները հնարավորություն կունենան համեմատելու նախագծերը ընդունված որոշումների հետ և դրանք հասանելի կլինեն նրանց միշտ, կարիք չեն ունենա այս կամ այն որոշումը կամ հարակից փաստաթղթին ծանոթանալու համար գրավոր հարցմամբ դիմելու համայնքապետին և ծանրաբեռնելու համայնքապետարանի աշխատանքը:

Առաջարկվում է նաև համայնքային պաշտոնական կայքերում հատուկ բաժին բացել համայնքապետի ընդունած բոլոր իրավական ակտերի հրապարակման համար և կազմակերպել այդ փաստաթղթերի կանոնավոր հրապարակումները: Այդ հրապարակումները հարկավոր է կազմակերպել այնպիսի ձևաչափով, որի շնորհիվ հնարավոր կլինի ապահովել ամենապարզ մատչելիությունը այդ նյութերին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքապետարանների կայքերում զետեղված ավագանու նիստերի տեսագրությունների հղումները թերի են և գործում է դրանց ընդամենը երեք քառորդը, ինչը բացահայտվել է մոնիտորինգի արդյունքում, համայնքապետերին առաջարկվում է համայնքապետարանների համապատասխան մասնագետների համար վերապատրաստում կազմակերպել, ապահովել բոլոր նիստերի ուղիղ հեռարձակումը համացանց, ներբեռնել և պահպանել բոլոր հեռարձակումների տեսագրությունները համայնքապետարանի թվային կրիչների վրա, համայնքապետարանի կայքում պատշաճ կերպով և հեշտ հասանելի եղանակով ներկայացնել նիստերի բոլոր տեսագրությունները: Անհրաժեշտության դեպքում հարկավոր է տեխնիկական համալրում իրականացնել այն հաշվով, որ ուղիղ հեռարձակման ընթացքում և տեսագրություններում հստակ և աներկբա լսելի ու տեսանելի լինեն ելույթները և ելույթ ունեցողները:

5. Շահերի բախումների կարգավորման մասին

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անհնարին է եղել մոնիտորինգի շրջանակներում ուսումնասիրված համայնքային կայքերում գտնել բոլոր համայնքների ավագանու կանոնակարգերը (դրանք չկային դիտարկված կայքերի 24,1%-ի դեպքում) և անհնար է եղել պարզել, թե դրանցում ավագանու անդամների շահերի բախման կարգավորող դրույթներ կա՞ն, թե՞ ոչ, առաջարկվում է բոլոր համայնքների կայքերում ներկայացնել այդ համայնքի ավագանու կանոնակարգը, իսկ դրանում պատշաճ կերպով սահմանել ավագանու անդամների շահերի բախման ռիսկերի նվազեցումը սահմանող դրույթները: Եթե չկան այդպիսիք, փորձագիտական խորհրդատվության միջոցով առաջարկվում է լրամշակել դրանք համապատասխան դրույթներով:

6. Աճուրդների կազմակերպման հրապարակայնության մասին

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային կարգով օտարման վերաբերյալ հայտարարությունները համայնքային կայքերում հրապարակվել են ընդամենը 15,5%-ի դեպքում, իսկ մյուս դեպքերում չեն հրապարակվել, կամ հրապարակվել են, ապա հեռացվել, ինչը խիստ անբավարար է աճուրդների գործընթացների թափանցիկությունն ապահովելու համար, առաջարկվում է համայնքի ղեկավարներին՝ հանձնարարել համայնքային պաշտոնական կայքում ստեղծել աճուրդների մասին հրապարակայնության բաժին, որտեղ զետեղվեն աճուրդներին վերաբերվող բոլոր փաստաթղթերը՝ հայտարարությունները, հայտատուների ցուցակները, աճուրդին դրվող գույքը, աճուրդային հանձնաժողովի որոշումը և այլն: Չնայած այն հանգամանքին, որ օրենսդրությունը չի պարտավորեցնում ապահովել աճուրդի ուղիղ հեռարձակում, հանրային շահի, թափանցիկության, և հաշվետվողականության ապահովման շահից, առաջարկվում է բոլոր աճուրդների համար ապահովել բավարար տեխնիկական որակով ուղիղ հեռարձակում, պահպանելով հեռարձակման տեսագրությունը և հղումները՝ կայքի աճուրդի բաժնում:

Հավելված 1. Իրավական ակտեր

1. ՀՀ Հողային օրենսգիրք, 02.05.2001թ.
2. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, 07.05.2002թ.
3. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, 23.09.2003թ.
4. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, 21.03.2018թ.
5. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, 23.03.2018թ.
6. «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 26-ի թիվ 1521-Ն որոշում
7. «Պետական եվ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշում
8. «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018թ. հոկտեմբերի 10-ի թիվ 1146-Ն որոշում
9. «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018թ. հոկտեմբերի 10-ի թիվ 1146-Ն որոշում
10. ««Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում ՀՀ երկրորդ գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2014 թ. հուլիսի 31-ի նիստի N 32 արձանագրային որոշման Հավելված

Հավելված 2. Համայնքային կայքերի դիտարկման քարտ

3000 և ավել բնակչություն ունեցող ՀՀ համայնքների կայքերի մոնիտորինգ

https://infosys.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=2&dt=Sites&tv=-2 *հղմամբ գտնել համայնքների ցանկից համապատասխան կայքը: Գրանցվել կայքում: Դիտարկման արդյունքները լրացնել Excel բազայի համապատասխան թերթում:*

Մարզ _____ *Համայնք* _____

Բնակչության թիվ ____

Դիտարկման ամսաթիվ _____ *Դիտարկման կայք* _____

Տարի _*2018*___

www.infosys.am

Ընդհանուր

Լրացվում է Excel տվյալադարանի «Ընդհանուր» sheet-ում

1. Աշխատո՞ւմ է կայքի ընդհանուր որոնում ֆունկցիան:
   1. այո 2. Ոչ
2. Համայնքի ավագանու որոշումների հերթական համարակալումը ամբողջակա՞ն է? *(որոնման մեջ տալ «նախորդ տարի» և համակարգը կբերի բոլոր 2018թ. որոշումները, ըստ համարակալման ստուգել՝ կան արդյո՞ք բացակայող որոշումներ)*
   1. այո 2. Ոչ



3. Համայնքի ավագանու որոշումների ընդհանուր թիվը 2018թ. ընթացքում ____
4. Համայնքի ղեկավարի որոշումների հերթական համարակալումը ամբողջակա՞ն է? *(որոնման մեջ տալ «նախորդ տարի» և համակարգը կբերի բոլոր 2018թ. որոշումները)*
   1. այո 2. ոչ
5. Համայնքի ղեկավարի որոշումների ընդհանուր թիվը 2018թ. ընթացքում ____

6. Ավագանու անդամների ընդհանուր թիվը _____

7. Ավագանու անդամներից քանիսի

7.1 Բջջ. հեռախոսահամարն է առկա _____

7.2 Էլ. փոստով դիմելու հնարավորությունն է առկա *(ստուգել, աշխատում է արդյոք կոճակը)* _____

8. Առկա է արդյո՞ք համայնքի ղեկավարի

8.1 Հեռախոսահամարը

1. բջջային հեռախոսահամար 2. Թաղապետարանի հեռախոսահամար 3. Առկա չէ

8.2 Էլ. փոստով դիմելու հնարավորությունը *(ստուգել)*

1. այո 2. Ոչ

9. Ավագանու անդամների քվեարկությունը *(«ՏԻՄ»-«Ավագանու անդամներ» բաժնում առկա է ընդհանրացված պատկերը)*



9.1 Կողմ քվեարկությունների թիվը _____

9.2 Դեմ քվեարկությունների թիվը _____

9.3 Ձեռնպահ քվեարկությունների թիվը _____

9.4 Նշել լիազորությունների ժամկետը _____ *թ.-ից* _____*թ.-ը (օր՝ 2016/2020)*

10. Առկա է արդյոք կայքում ավագանու կանոնադրություն/կանոնակարգ *(գնալ՝ «ՏԻՄ»-«համայնքի ավագանի»-«Ավագանու կանոնակարգ» բաժին)*

1. այո 2. Ոչ *(անցնել 11-րդ հարցին)*

10.1 Եթե այո, ապա կա դրանում «շահերի բախման»-ը առնչվող դրույթներ *(Ներբեռնել ֆայլը, ստուգել Ctr.F-ով որոնման ֆունկցիան աշխատում է, թե ոչ, ապա որոնում տալ* «շահեր», «բախում» բառերով: *Եթե որոնումը չի աշխատում, ապա կարդալ կանոնակարգը)*

1. այո 2. Ոչ

11. «Դիմել համայնքապետարան» բաժնում դիտել Վիճակագրություն բաժինը 2018թ. համար:



11.1 առցանց դիմումների թիվը _____

11.2 առցանց հարցումների թիվը _____

11.3 առցանց բողոքների թիվը _____

Հայտարարություններ, Իրադարձություններ, Նորություններ բաժին

Կայքի ընդհանուր որոնման միջոցով որոնել «զսում», «զսումներ», «հանրային քննարկում» բառերով:

12. Որոնման արդյունքում բերված արդյունքներից 2018թ. ընթացքում առկա՞ են արդյոք հանրային քննարկում/լսում կազմակերպելու մասին հայտարարություն/իրադարձություն/նորություն *(Կատարել որոնում ըստ «հանրային լսում/լսումներ» , «հանրային քննարկում» բառակապակցությունների կամ «զսում», «զսումներ», «քննարկում» բառերով: Նման որոշումներ կարող են լինել օրինակ՝ բյուջեի նախագծի կամ հնգամյա զարգացման ծրագրի առնչությամբ)*

1. այո 2. Ոչ *(անցնել հարց 13-ին)*

12.1 Եթե այո, ապա քանի հանրային լսում_____, հանրային քննարկում _____

12.2 Առկա են արդյո՞ք հանրային լսման/քննարկման վերաբերյալ հայտարարությանը կից փաստաթղթեր

1. այո 2. Ոչ

12.3 Առկա է արդյոք հեռարձակման հղում (ստուգել)

1.այո 2. Ոչ 3. Այո, բայց չի բացում

12.4 Առկա է կայքում քննարկումների արձանագրությունը/ամփոփաթերթը:

1. այո 2. Ոչ

Համայնքի ղեկավարի որոշումներ բաժնում տալ որոնում 2018թ. (նախորդ տարի) «աճուրդ», «աճուրդ-վաճառք» բառերով: Գտնել որոշումներ, որոնք վերնագրում պարունակում են «աճուրդ-վաճառքում հաղթող ճանաչելու մասին» դրույթներ:

13. Որոնման արդյունքում 2018թ. ընթացքում քանի համայնքի ղեկավարի որոշում կա աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու մասին և/կամ հաղթող ճանաչելու մասին _____

Հայտարարություններ, Իրադարձություններ, Նորություններ բաժին

Կայքի ընդհանուր որոնման միջոցով որոնել «աճուրդ», «աճուրդ-վաճառք» բառերը՝ 2018թ. համար (որոնման մեջ նշել "նախորդ տարի"):

14. Որոնման արդյունքներից «հայտարարություններ», «իրադարձություններ» կամ «նորություններ» բաժնում առկա է աճուրդ-վաճառք կազմակերպելու մասին տեղեկատվություն:

1. այո _____(նշել քանիսը 2018թ. ընթացքում) 2. Ոչ (մուտքագրել "0")

14.1 Եթե այո, ապա առկա են հայտարարությանը կից փաստաթղթեր

1. այո 2. ոչ

ՏԻՄ Համայնքի ավագանի Ավագանու նիստեր

Բաժին 1. Ավագանու նիստեր (դիտարկման միավոր՝ համայնք)

1.1 Ավագանու նիստերը կայքում առկա են ……թ.-ի …… ամսից *(ոչ թե 2018-ի մասին է, այլ առհասարակ)*

1.2 2018թ. ընթացքում քանի _____ ավագանու նիստ, որից _____ հերթական, _____ արտահերթ _____

1.3 2018թ. ընթացքում կայացած նիստերից քանիսի արձանագրությունն է առկա _____ *(նշել ընդհանուր թիվը) (եթե առակա չէ, անցնել հարց 1.4-ին)*

1.3.1 Ինչ ձևաչափով է/են առկա արձանագրություն(ներ)ը: *(Բացել ֆայլերը, համոզվել, որ բացվում են և ընթեռնելի են)*

1. Word file_____ 2. PDF file (նկար)_____ 3. PDF file _____
4. Այլ _____

1.3.2 Առկա են ավագանու անդամների ստորագրությունները PDF ֆայլում:

1. այո 2. ոչ 3. Մասամբ, ոչ բոլորը

1.4 . 2018թ. ընթացքում կայացած նիստերից քանիսի տեսագրությունն է առկա[13] _____ (նշել ընդհանուր թիվը) *(ստուգել ձայնագրությունները գործնականում)*

1.4.1 Արդյոք տեսագրության հղումն աշխատում է

1. Տեսագրության հղումը աշխատում է
2. Հղումը կա կայքէջում, բայց չի բացում
3. Հղումը կա, բայց կայքէջում չի բացում, բացում է youtube-ում
4. Նիստերի տեսագրությունները կայքում առկա չեն, բայց հասանելի են youtube-ում

1.4.2 Գնահատել տեսագրության որակը:

1. Լավ/հստակ լսելի 2. միջին 3. Վատ լսելի

Այլ դիտարկումներ տեսագրության հետ կապված

Հավելյալ նշումներ Բաժին 1-ի համար

ՏԻՄ Համայնքի ավագանի Համայնքի ավագանու որոշումներ

Բաժին 2. Համայնքի ավագանու որոշումներ (դիտարկման միավոր՝ որոշում)

Լրացվում է Excel «Ավագանու որոշումներ» sheet-ում, դիտարկման միավորը՝ ավագանու որոշում

Ավագանու 2018թ. որոշումների ցանկից ընտրել.

---

[13] Այս պահանջը գործում է 10000 և ավել բնակիչ ունեցող համայնքներում ավագանու հրապարակային նիստերը առցանց հեռարձակվում են համայնքի պաշտոնական համացանցային կայքում:

3000-5000 բնակչություն ունեցող համայնքներից՝ 3 որոշում
5001-10000 բնակչություն ունեցող համայնքներից՝ 5 որոշում
10001-ից ավելին ունեցող համայնքներից՝ 7 որոշում

Ավագանու որոշումներ բաժում որոնման համակարգի միջոցով տալ որոնում նախ՝ «հավելված» բառով, ապա բերած ցանկից «բյուջե», «հաշվետվություն», «վաճառք», «աճուրդ», «զումներ», «Տարեկան աշխատանքային պլան», «հաստիքացուցակ» բառերով
2-րդ բաժինը լրացվում է յուրաքանչյուր որոշման համար, դիտարկման միավորները (տողերը)՝ որոշում:

Համարակալումը հետևյալ սկզբունքով. «4-Ն», «11-Ա»

2. Նշել որոշման առանցքային/որոնման բառը
    1. բյուջե
    2. հաշվետվություն
    3. վաճառք, օտարում
    4. աճուրդ
    5. տարեկան աշխատանքային պլան
    6. այլ _____

2.1 Համայնքի ավագանու որոշման համարը _____
2.2 Ավագանու որոշման ամսաթիվը (օր/ամիս/տարի) …..…/…..…/……
2.3 Ավագանու որոշումն ընդունվել է
    1. միաձայն *(անցնել հարց 2.4-ին)* 2. Տարբերակված քվեարկությամբ
    2.3.1 Տարբերակված քվեարկության դեպքում
    1. Անվանական են ներկայացված քվեարկության արդյունքները
    2. Ընդհանրացված են ներկայացված քվեարկության արդյունքները

2.4 Կից փաստաթղթերի առկայությունը *(եթե արձանագրության մեջ առկա է «համաձայն հավելվածի» նշումը)*
    1. առկա է
    2. առկա չէ
    3. առկա են մասամբ, ոչ բոլորը
    4. կիրառելի չէ *(հավելվածի մասին նշում չկա)*

Հավելյալ նշումներ բաժին 2-ի վերաբերյալ
_____
_____
_____

Բաժին 3. Համայնքի ղեկավարի որոշումներ

Լրացվում է Excel «Համայնքապետի որոշումներ» sheet-ում, դիտարկման միավորը՝ համայնքապետի որոշում

Համայնքի ղեկավարի որոշումների ցանկից ընտրել.

3000-5000 բնակչություն ունեցող համայնքներից՝ 3 որոշում
5001-10000 բնակչություն ունեցող համայնքներից՝ 5 որոշում
10001-ից ավելին ունեցող համայնքներից՝ 7 որոշում

Որոնում նախ՝ «հավելված», ապա բերված արդյունքների մեջ Ctrl F-ով «գումներ», «Տարեկան աշխատանքային պլան», «հաշվետվություն», «աճուրդ», բառերով:
3-րդ բաժինը լրացվում է յուրաքանչյուր որոշման համար:

3. Նշել որոշման առանցքային/որոնման բառը
    1. բյուջե
    2. հաշվետվություն
    3. վաճառք, օտարում
    4. աճուրդ
    5. տարեկան աշխատանքային պլան
    6. լսումներ (հանրային)
    7. այլ _____

3.1 Համայնքի ղեկավարի որոշման համարը ____

3.2 Որոշմանը կից փաստաթղթերի առկայությունը *(եթե որոշման մեջ առկա է «համաձայն հավելված»-ի նշումը)*
    1. առկա է
    2. առկա չէ
    3. առկա են մասամբ, ոչ բոլորը
    4. կիրառելի չէ *(հավելվածի մասին նշում չկա)*

Հավելյալ նշումներ

_____

_____

_____

Բաժին 4. Դիմել համայնքապետարան

«Դիմել համայնքապետարան» կոճակի միջոցով ուղարկել հետևյալ բովանդակությամբ <u>հաղորդումը</u>:

Հարգելի ….. (համայնքապետի անուն, ազգանունը)

Խնդրում ենք տրամադրել …. համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ հաստատված 2019թ. համար, կամ տրամադրել փաստաթղթի հղումը՝ եթե այդպիսին կա:

Տեղեկատվությունը հայցում եմ ստանալ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ 5-օրյա ժամկետում:

Հարգանքով,

Հարցման բովանդակության այլ տարբերակներ.

- *Խնդրում ենք տրամադրել …. համայնքապետարանի կողմից աղբահանության ծառայության ձեռքբերման նպատակով կնքված և ներկայիս գործող պայմանագիրը:*
- *Խնդրում ենք տրամադրել …. Համայնքապետարանի, այդ թվում ՀՈԱԿ-ների աշխատողներին վճարված աշխատավարձը և հավելավճարները:*